ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« Մ Ա Ր Գ Ր Ո Ւ Պ 1 »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՔԱՐԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2026-2028 թ.թ. ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

«ՄԱՐ ԳՐՈՒՊ 1»

ԱՊԸ-ի տնօրեն Պ.Կարագոզյան

ԵՐԵՎԱՆ 2026թ.

Տվյալներ թափոններ առաջացնող կազմակերպության վերաբերյալ՝

Նախաձեռնող՝ «ՄԱՐ ԳՐՈՒՊ 1» ՍՊԸ

Գրանցման համար՝ 51.110.1207436

Գրանցման օրը՝ 12.06.2021թ.

ՀՎՀՀ՝ 04239712

Գտնվելու վայրը՝ ՀՀ, Վեդի, Արարատյան փ տուն 104

ՀՀ Արարատի մարզի Դաշտաքարի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում 2026-2028թթ. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը կազմվել է «ՄԱՐ ԳՐՈՒՊ 1» ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող գործունեությունն անվանվում է՝ «ՀՀ Արարատի մարզի Դաշտաքարի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում 2026-2028թթ. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագիր»:

Նախատեսվում է պարզել դրանից ստացվող հումքի համապատասխանությունը «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՕՍՏ-ի և «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ԳՕՍՏ-ի տեխնիկական պահանջներին:

Նախատեսվում է մանրակրկիտ հետախուզում, հումքի որակական հատկությունների պարզաբանման և արդյունաբերական A, B և C1 կարգով պաշարների գնահատման և հաշվարկման նպատակով;

Դաշտաքարի ավազակոպճային խատնուրդի երևակումը գտնվում է համանուն բնակավայր հյուսիսարևելյան հատվածում, Վեդի քաղաքից մոտ 2.7 կմ դեպի հյուսիս-արևելք և զբաղեցնում է 4.07 հա տարածք, որը բնութագրվում է 970-1000 մ բացարձակ բարձրություններով

Հանքերևակամն կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

39°55'31.00" – հյուսիսային լայնության,

44°45'49.00" – արևելյան երկայնության:

Հանքերևակումը գտնվում է բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում: Դրանից շուրջ 0.6 կմ հարավ անցնում է Վեդի - Շաղափ - Եղեգնաձոր - Մեղրի ավտոմայրուղին: Բնակավայրերի հետ երևակումը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:

Հանքերևակումը գտնվում է Ուրցի լեռնաշղթայի հարավ-արևմտյան նախալեռնային մասում, բնութագրվում է նախալեռնային ռելիեֆով, անտառազուրկ է, զուրկ է խոտաբուսական ծածկից:

Կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C): Տարեկան միջին ջերմաստիճանը +16°C է: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300 մմ: Անսառնամանիք օրերի թիվը՝ 150-200 օր:

Շրջանի աշխարհագրատնտեսական բնութագիրը

Դաշտաքարի ավազակոպճային խատնուրդի երևակումը գտնվում է համանուն բնակավայր հյուսիսարևելյան հատվածում, Վեդի քաղաքից մոտ 2.7 կմ դեպի հյուսիս-արևելք և զբաղեցնում է 4.07 հա տարածք, որը բնութագրվում է 970-1000 մ բացարձակ բարձրություննեով

Հանքերևակամն կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

39°55'31.00" – հյուսիսային լայնության,

44°45'49.00" – արևելյան երկայնության:

Հանքերևակումը գտնվում է բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում: Դրանից շուրջ 0.6 կմ հարավ անցնում է Վեդի - Շաղափ - Եղեգնաձոր - Մեղրի ավտոմայրուղին: Բնակավայրերի հետ երևակումը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:

Տարածաշրջանը հիմնականում գյուղատնտեսական է, զարգացած անասնաբուծությամբ, այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: Արդյունաբերությունը ներկայացված է գյուղմթերքների մշակման (գինու և պահածոների) և շինանյութերի արդյունահանման ձեռնարկություններով: Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի հենքի վրա 1933թ.-ից գործում է Արարատի ցեմենտի գործարանը: Գործում են նաև մի քանի քարամշակման արտադրամասեր: Ներկայումս շահագործվում են նաև կրաքարերի, տրավերտինների և ավազակոպճային խառնուրդների մի քանի հանքավայրեր և տեղամասեր: Արդյունաբերական ձեռնարկությունները կենտրոնացած են Վեդի և Արարատ քաղաքներում: Շրջանն էլեկտրաֆիկացված է:

Տեղամասը գտնվում է՝

Վեդի քաղաքից 3,6կմ հյուսիս-արևելք,

Դաշտաքար գյուղի կենտրոնից 0,8կմ արևելք

Ուրցաձոր գյուղի կենտրոնից 5,0կմ արևմուտք

Ուրցաձոր-Վեդի ավտոմոբիլային ճանապարհից 0,4կմ հյուսիս

Վեդի գետից 0,8կմ հյուսիս-արևմուտք,

Վեդու ջրամբարից 3,2կմ հարավ-արևմուտք:

Հանքերևակումը գտնվում է Ուրցի լեռնաշղթայի հարավ-արևմտյան նախալեռնային մասում, բնութագրվում է նախալեռնային ռելիեֆով, անտառազուրկ է, զուրկ է խոտաբուսական ծածկից:

Մերձարաքսյան գոգավորության հյուսիս-արևելյան կողմում և Վեդի գետի հովտում 850մ-ից մինչև 1600մ բացարձակ բարձրությունների վրա տրավերտինները կազմում են բազմաթիվ տարբեր չափսերի ծածկոցներ։

Ժամանակակից առաջացումները ներկայացված են ալյուվիալ և ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով։ Ալյուվիալ առաջացումները հարում են գետերի հուներին։ Այս հասակին է վերաբերում նաև դիտարկվող օգտակար հանածոն։

Վերին օլիգոցենից մինչև չորրորդական ժամանակաշրջանը ապարների առաջացումը ընթացել է կոնտինենտալ պայմաններում։

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոզոյի, կավճի, պալեոգենի և մասամբ նեոգենի հրաբխանստվածքային և նստվածքային, չորրորդականի նստվածքային, ժամանակակից այլուվիալ-պրոլյուվիալ և դելյուվիալ առաջացումները։

Շրջանի երկրաբանական կառուցվածքի հիմնական տարրերը արտացոլված են Ա.Տ.Վեհունու և Ռ.Կ.Խաչատրյանի կողմից կազմված 1:50000 մասշտաբի քարտեզում։

Պալեոզոյ - այս դարաշրջանի ապարները կազմում են հերցինյան ծալքավորման կոմպլեքսը։ Կոմպլեքսը ներկայացված է դևոնի, կարբոնի և պերմի ժամանակաշրջանի ապարներով, որոնք լայն տարածում ունեն երևակումից դեպի հարավ-արևելք գտնվող Ուրցի լեռնաշղթայում։

Վերին դևոն - մերկանում է Ուրցի անտիկլինալի միջուկում։ Ներկայացված է մինչև 600մ հզորությամբ կրաքարերով, քվարցիտներով, ավազաքարերով և ֆիլիտներով։

Ստորին կարբոն - տարածված է Ուրցի անտիկլինալի թևերում, որտեղ ներկայացված է ավազաքարերով, ընդհանուր - 200մ հզորությամբ։ Միջին և վերին կարբոնի նստվածքները Հայաստանի հարավ-արևելյան մասում բացակայում են։

Ստորին պերմ - տարածականորեն կապված է վերը ներկարագրված ապարների հետ։ Ներկայացված է 350-700մ հզորությամբ բիտումացված և օրգանոգեն կրաքարերով։ Պերմի շերտախումբը շերտագրական աններդաշնակությամբ տեղադրված է ստորին կարբոնի նստվածքների վրա։

Մեզոզոյ - Այս դարաշրջանը ներայացված է վերին կավճի նստվածքային և հրաբխածին ապարներով, որոնք հիմնականում տարածված են Վեդի գետի աջափնյա ավազանում։ Այդ ապարների կոմպլեքսն ազիմուտային և անկյունային աններդաշնակությամբ տեղադրված է հերցինյան ծալքավորված կառուցվածքի հողմահարված մակերեսի վրա և կազմված է 4 շերտախմբերից, որոնք ըստ հասակի համապատասխանում են տուրոնին, ստորին կոնյակին, վերին կոնյակին, սանտոնմաաստրիխտին։

Տուրոն - մերկանում է Մարմարասարի անտիկլինալի թևերում (Վեդի գետի միջին հոսանքի կիրճի եզրերում), որտեղ ներկայացված է 250մ հզորությամբ կրաքարերով։

Ստորին կոնյակ (Խոսրովի շերտախումբ) - ներկայացված է օֆիոլիտային գոտու ապարներով՝ (պիրոքսենային պորֆիրիտներ, կրաքարի փոքր շերտերի ու ոսպնյակների ներփակումներով)։ Այս շերտախումբը լայն տարածում ունի Վեդի գետի միջին և վերին հոսանքներում, որտեղ նա տրանսգրեսիվ ծածկում է տուրոնի կրաքարերը և ունի մինչև 490 մ հզորություն։

Վերին կոնյակ – ներկայացված է 150-200մ հզորությամբ տերիգեն շերտախմբով, կազմված կոնգլոմերատներից, ավազաքարերից, ալևրոլիտներից։

Շերտախումբը մերկանում է Այգեզարդի և նրանց հյուսի գտնվող Երասխի անտիկլինալների կորիզներում։

Սանտոն-մաաստրիխտ - ներկայացված է իրար շերտափոխող կրաքարերով ու մերգելներով, ընդհանուրը 250-300 մ հզորությամբ։ Այս շերտախումբը տեղադրված է վերին կոնյակի ապարների վրա առանց տեսանելի անկյունային աններդաշնակությամբ։

Կայնոզոյ - Ներկայացված է 1800-2000 մ հզորությամբ նորմալ նստվածքային և տուֆանստվածքային ապարներից կազմված կոմպլեքսով, որի կազմում անջատվում են ստորին, միջին պալիոցեն, վերին էոցենի, ստորին օլիգոցենի, վերին օլիգոցեն - ստորին միոցենի շերտախմբեր և չորրորդական ժամանակաշրջանի նստվածքներ։

Պալեոցեն - տարածված է Վեդի գետի աջափնյա ավազանում, որտեղ տրանսգրեսիվ ծածկում է վերին սենոնին և ներկայացված է 200-250մ հզորությամբ ֆլիշանման շերտախմբով, որը ներկայացված է կոնգլոմերատներով, ավազաքարերով, ավազային կրաքարերով ու կավերով։

Ստորին էոցենից մինչև ստորին օլիգոցեն ընկած ժամանակահատվածում առաջացած նստվածքները կազմում են միասնական անընդմիջելի կառուցվածքաֆորմացիոն կոմպլեքս, որը համապատասխանում է շրջանի ուշ ալպիական գեոսինկլինալային զարգացման էտապին։

Ստորին էոցեն - տրանսգրեսիվ, աններդաշնակ (ազիմուտային և անկյունային) ծածկում է պալոցենից մինչև կարբոնի հասակի ապարները։ Շերտախումբը մերկանում է Շաղափի սինկլինալի և Վեդի գետի աջ ափում գտնվող մի շարք փոքր սինկլինալային ծալքերի թևերում։ Ամենուրեք այն ներկայացված է 50-100մ հզորությամբ մասիվ կրաքարերի հաստվածքով։

Միջին էոցեն - ներկայացված է ավազաքարերով, կաօվերով, տուֆիտներով, տուֆաավազաքարերով, ընդհանուր 500 մ հզորությամբ։ Շերտախումբը կազմում է վերոհիշյալ սինկլինալային կառույցների կենտրոնական մասերը։

Վերին էոցեն - ներկայացված է ավազաքարերով, ավազային կավերով, բրեկչիանման կրաքարերով, ընդհանուրը 500 մ հզորությամբ։ Այդ ապարների հիմնական տարածման շրջանը Շաղափի սինկլինալի կենտրոնական մասն է։

Ստորին օլիգոցեն - Ներկայացված է շերտափոխվող ավազաքարերով, կավերով, ընհանուրը 250 մ հզորությամբ։

Այս շերտախումբը հետագա էռոզիայից պահպանվել է միայն Շաղափի սինկլինալում։

Վերին օլիգոցեն - ստորին միոցեն - մերկանում է Մերձարաքսյան գոգավորության հյուսիս-արևելյան կողմում, որտեղ ներկայացված է ծովա–լագունային խայտաբղետ կավերով, ավազաքարերով, կոնգլոմերատներով, ընդհանուր 250 մ հզորությամբ։

Չորրորդական ժամանակահատված՝

Ստորին-միջին չորրորդական - ներկայացված է 100-120 մ հզորությամբ լճային ավազների, կավերի և գլաքարերի շերտախմբով, որը լայն տարածում ունի Մերձարաքսյան գոգավորության կենտրոնական մասում:

Միջին-վերին չորրորդական - այս ժամանակահատվածին են վերագրվում շրջանի տրավերտինային առաջացումները, որոնք դիտվում են որպես միջին-վերին չորրորդականի ընթացքում ակտիվ գործող հրաբուխների հետ կապված թերմալ աղբյուրներից կարբոնատային նյութի նստեցման հետևանքով առաջացած մարմիններ:

Մերձարաքսյան գոգավորության հյուսիս-արևելյան կողմում և Վեդի գետի հովտում 850մ-ից մինչև 1600մ բացարձակ բարձրությունների վրա տրավերտինները կազմում են բազմաթիվ տարբեր չափսերի ծածկոցներ:

Ժամանակակից առաջացումները ներկայացված են ալյուվիալ և ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով: Ալյուվիալ առաջացումները հարում են գետերի հուներին: Այս հասակին է վերաբերում նաև դիտարկվող օգտակար հանածոն:

Վերին օլիգոցենից մինչև չորրորդական ժամանակաշրջանը ապարների առաջացումը ընթացել է կոնտինենտալ պայմաններում:

Ինտրուզիվ մագմատիզմը շրջանում ակտիվացած է բազիտ-գիպերբազիտային ապարների մանր ներդրումներով ստորին կոնյակի շերտախմբում և դիաբազային կազմի դայկանման մարմիններով պալեոզոյան կոմպլեքսում:

Տեկտոնական տեսակետից նկարագրվող շրջանը գտնվում է Երևան-Օրդուբադի և Մերձարաքսյան տեկտոնական զոնաների սահմանային գոտում Մերձարաքսյան զոնան իրենից ներկայացնում է միջլեռնային ճկվածք, որը լցված է թույլ ու ոչ ծալքավորված ուշ ալպիական օրոգեն էտապի մոլլասային նստվածքներով:

Իրենից հյուսիս-արևելք գտնվող Երևան-Օրդուբադի զոնայի լեռնային կառուցվածքներից Մերձարաքսյան զոնան սահմանափակվում է Երևանյան խորքային ճեղքվածքով:

Երևան-Օրդուբադի զոնան բաղկացած է մի շարք լայնակի և հյուսիսարևմտյան տարածում ունեցող սինկլինային ու անտիկլինային ծալքերից, որոնցից խոշորներն են Վեդի գետի ձախափնյա ավազանում գտնվող Ուրցի և Լանջանիստի անտիկլինալները ու նրանց բաժանող Շաղափի սինկլինալը:

Վեդի գետի աջափնյա ավազանում գտնվող տեկտոնական կառույցները ներկայացված են բրախիառանցքավոր ծալքերով: Այստեղ հարավից դեպի հյուսիս իրար հաջորդում են Այգեզարդի, Երասխի, Չաթմայի բրախիանտիկլինալները և նրանց բաժանող Հայոցբերդի, Կոտուցի, Խոսրովի բրախիսինկլինալները: Բրախիանտիկլինալները կազմված են վերին կավիճ ապարներից, իսկ բրախիսինկլինալները՝ էոցենի նստվածքներից:

Հանքերևակման առաջացումները գենետիկորեն կապված են Կոտուց գետի (Վեդի գետի աջ վտակ) արտաբերման և գետաափամերձ ժամանակակից ալյուվիալ նստվածքների հետ ու հանդիսանում է գետառողողատային տիպի օբյեկտ:

Հանքերևակման երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ժամանակակից ալյուվիալ մանրակոպճային և մանրահատիկային ավազակոպճային առաջացումները, որոնք պարունակում են չնչին քանակությամբ կավափոշային նյութ: Այս նստվածքները

ծածկում են վերին չորրորդականի ավազակավերին և կավավազներին: Ավազակոպճային խառնուրդը զբաղեցնում է Կոտուց գետի ափամերձ տարածքները:

Համաձայն «Շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» տեղամասերն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության վերագրվում է 1-ին խմբի 1բ ենթախմբին:

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ տարածքը գտնվում է 2- րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 400 սմ/վ2 կամ 0.4g:

Թափոնների օբյեկտի տեղադիրքի և սահմանների նկարագրությունը

Համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 3-ի 1-ին մասի 38)-րդ կետի՝ընդերքօգտագործման թափոնների օբյեկտը՝ տարածք է, տեղ, ներառյալ՝ ցանկացած պատվար կամ որևէ այլ կառույց (ներառյալ՝ պոչամբարները), որը նախատեսված է տարածքն իր մեջ պարունակելու, սահմանափակելու կամ այլ կերպ որպես հենարան պահելու նպատակին, որտեղ հավաքվում, կուտակվում, պահվում, հեռացվում, վնասազերծվում, տեղադրվում կամ թաղվում են ընդերքօգտագործման թափոնները (պինդ, հեղուկ կամ կիսահեղուկ վիճակում):

Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ չեն հանդիսանում այն տարածքները (ներառյալ՝փորվածհորերը), որտեղ ընդերքօգտագործման թափոնները տեղափոխվել են օգտակար հանածոյի արդյունահանումից հետո՝ վերականգնման կամ շինարարական նպատակներով:

Ելնելով վերոնշվածից, ընկերության կողմից տեղամասում ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ թափոնների օբյեկտի ստեղծում չի նախատեսվում:

Թափոնների բնութագրում

Թափոնները մարդու կենսագործունեության պրոցեսի և նրա տնտեսական գործունեության ընթացքում առաջացող նյութերը կամ իրերն են, որոնք ամբողջովին կամ մասամբ կորցրել են իրենց սպառողական հատկանիշները ֆիզիկական կամ բարոյական մաշվածության արդյունքում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանում են երեք տիպի թափոններ.

Հողի վերին շերտի բացակայում է:

Հետ լցման աշխատանքները լեռնայի փորվածքների կատարվելու են ձեռքով:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում շահագործվող մեքենամեխանիզմները հանդիսանում են թափոն առաջացնող, սակայն դրանց տեխնիկական սպասարկման արդյունքում փոխարինված յուղերը, դետալները և այլ

նմանատիպ թափոնները կմնան սպասարկման կետերում և չեն կուտակվի հայցվող տարածքում, ինչի արդյունքում, հայցվող տարածքում շրջակա միջավայրի վրա որևէ բացասական ազդեցություն չի ակնկալվում:

- կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի),, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ:

Կենցաղային թափոնները կազմված են սննդի, սպառողական այլ ապրանքատեսակների մնացորդներից, առանձին հավաքվող թափոններից: Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն: Այն կհավաքվի առավելագույնը 35լ տարողությամբ հատուկ պարկերի մեջ և կտեղափոխվի մոտակա աղբահավաք կետեր, որտեղից դրանք պարբերաբար համայնքի Կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են շրջանի աղբավայր:

Հետևաբար այս թափոնները ևս շրջակա միջավայրի և մարդկանց առաղջության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:

Տեղեկատվություն թափոնների օբյեկտի դասակարգման վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 15.07.2017թ.-ի №689-Ն որոշման հավելված 2-ի կարգի՝ թափոնների օբյեկտը դասակարգվում է «Ա» կատեգորիայի հետևյալի հիման վրա՝

1) փլուզում՝ կապված կառուցվածքային անսարքության կամ ոչ ճիշտ շահագործման հետ.

2) վտանգավոր թափոնների բաղադրությունը.

3) վտանգավոր նյութերի բաղադրությունը:

Ուսումնասիրության տեղամասի ընդերքօգտագործման թափոնների օբյեկտը չի կարող վերագրվել «Ա» կատեգորիայի:

Ընդերքօգտագործման թափոնների (այսուհետ՝ թափոններ) օբյեկտը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ, եթե դրա կառուցվածքային ամբողջականության խախտման արդյունքում եղած փլուզման կամ տեխնիկական անվտանգության կանոնների և նորմերի խախտմամբ իրականացված շահագործման (այսուհետ՝ ոչ ճիշտ շահագործում) հետևանքները կարճաժամկետ կամ երկարաժամկետ ապագայում կարող են հանգեցնել՝

- կյանքի կորստի անժխտելի հավանականության,

-մարդու առողջության նկատմամբ լուրջ վտանգի,

- թափոնների օբյեկտի շրջանում էկոլոգիական իրավիճակի անդարձելիորեն կամ խիստ խախտման:

Թափոնների օբյեկտն ըստ վտանգավորության կատեգորիայի դասակարգելիս դիտարկվում են նշված բոլոր երեք պարամետրերը։

Եթե երեք պարամետրերից ոչ մեկը չի հանգեցնում «Ա» կատեգորիայի դասակարգման, ապա թափոնների օբյեկտի ընդհանուր դասակարգումն «Ա» կատեգորիայի չէ։

Թափոնները վնասակար ազդեցության աստիճանը շատ ցածր է, էկոլոգիական համակարգը գործնականորեն չի խախտվում, թափոնի վտանգավորությունը շրջակա միջավայրի համար V դասի է, այն է՝ գործնականորեն անվտանգ։

Այսպիսով, այն «Ա» կատեգորիայի օբյեկտ չի համարվում։

Թափոնների օբյեկտ չի նախատեսվում։

Արտակարգ իրավիճակների առաջացման հնարավորություն, դրանց հետևանքների տեղայնացման և վերացման միջոցառումների մասին տեղեկություններ

Արտակարգ իրավիճակների գործողությունների պլան չի նախատեսվում։ Տեղամասը գտնվում է Արարատի մարզի Վեդի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքի հարթ տարածքի վրա։

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեթոդաբանության և ծավալների մշակման ժամանակ հաշվի են առնվել գեոդինամիկ երևույթների մասին տեղեկությունները, և ինչպես արդեն նշվել է տեղամասի և դրա հարակից տարածքներում սողանքային երևույթներ, փլուզումներ, քարաթափեր չեն արձանագրվել։

Նոր ճանապարհների կառուցում կամ նորոգում չի նախատեսվում, քանի որ տեղամաս տանող ճանապարհները բարենպաստ են։

Երկրաբանական ուսումնասիրության դաշտային աշխատանքները կարճատև են։ Փորձնական բացահանքի անցման ժամանակ առաջացած հողաբուսական շերտը և առաջացած լեռնային զանգվածը /մակաբացման ապարները/ նախատեսվում է կարճաժամկետ կտվածքով պահեստավորել անմիջապես տեղամասի հարևանությամբ այնպես, որ դրանք չդրսևորեն որևիցե բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա։

Ամփոփելով շարադրվածը կարելի է փաստել, որ ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում տեղամասի տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման վտանգը զրոյական է։

Ինչպես արդեն նշվել է վերևում, թափոնների օբյեկտ հետախուզվող տեղամասում չի նախատեսվում։

Անբարենպաստ պայմաններում, արտակարգ և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումներ և ծրագրեր.

Ուսումնասիրության ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակել է գործուղությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում, որոնք նպաստում են գետնամերձ շերտում վնասակար նյութերի կուտակմանը, ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի կոնցենտրացիաներիզգալի բարձրացումներ:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ, սակայն դրանց հստակ չափորոշիչները բացակայում են և դրանք որոշվում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- I. Քամու արագության նվազում,
- II. Անհողմություն, չոր եղանակ,
- III. Անհողմություն, թանձր մառախուղ: Նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

I. Ավելացվում են ջրցանի ծավալները:

II. Կրճատվում է միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակը:

Հակահրդեհային անվտանգություն՝ հանքում գտնվող էլեկտրական ենթակայանը պետք է համալրված լինի հակահրդեհային սարքավորումներով: Բոլոր այն սարքավորումները, որոնք չունեն ավտոման հակահրդեհային սարքավորումներ, պետք է ունենան ձեռքի կրակմարիչներ:

Անհրաժեշ է նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ արդյունահանման աշխատանքները դադարեցվում են, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

Երևույթների և իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվում են արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզի ստորաբաժանման պատասխանատուները և տեղական ինքնակառավարման մարմինները:

Հաշվի առնելով տարածքի աշխարհագրական դիրքը և տարածքի երկրաձևաբանական առանձնահատկությունները, կարող են առաջանալ արտակարգ իրավիճակների հետևյալ տարբերակները.

1. երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանրապետությունը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում : Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «**Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր**» N102-Ն հրամանի՝ տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 300 սմ/վ^2 կամ 0.3g ստորև ներկայացվում է սխեմատիկ քարտեզը:

Արարատի բնակելի շինությունները գտնվում են տարածքից բավականին հեռավորության վրա:

Հետևաբար, գյուղի բնակելի շինությունների համար ընդերքօգտագործման թափոնները և դրանց տեղադրման վայրերը (արտաքին, այնուհետև ներքին լցակույտեր) որևէ վտանգ չեն կարող ներկայացնել:

2. հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Տարածքում կարող է առաջանալ հրդեհային իրավիճակ, քանի որ այնտեղ պահեստավորվում են արդյունահանման աշխատանքների ընթացքում կիրառվող նավթամթերքները և դրանց թափոնները : Թափոնների օբյեկտի տարածքում՝ առաջացման հավանականություն չկա, քանի որ բազալտի բեկորներով և բերվածքային առաջացումներով ներկայացված ընդերքօգտագործման թափոնները իներտ են, չեն փոխազդում շրջակա միջավայրի բաղկացուցիչ տարրերի հետ (բեկորները հողային զանգվածի հետ չեն միախառնովում, չեն լուծվում ջրերում, չեն օքսիդանում, չեն ենթարկվում քիմիական բաղադրության փոփոխության մթնոլորտային օդի հետ շփվելիս), հրդեհավտանգ չեն: Հետևաբար հրդեհի բռնկման դեպքում, թափոնների կամ թափոնների օբյեկտի որևէ ազդեցություն վրա չի դրսևորվելու:

3. սողանքային երևույթների հետ կապված արտակարգ իրավիճակներ առաջանալ չեն կարող, քանի որ տարածքում և հարակից շրջաններում սողանքավտանգ տարածքներ չկան :



Արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանը

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նպատակով տարածքում աշխատող անձնակազմի համար պարբերաբար կազմակերպվում են իրազեկման դասընթացներ և ներկայացվում է գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ տարածքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- կանգնել բացօթյա տարածքում,
- ապահովել տարածքում աշխատանքներ իրականացնող անձնակազմի տարհանումը,
- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարհանումը,
- ապահովել առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքի առկայությունը,
- ապահովել հրդեհշիջման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների առկայությունը արտադրական հրապարակում:

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները պարբերաբար տեղեկացվում են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ : Նշանակված է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակված է ուսումնասիրության տարածքից անձնակազմի տարհանման պլան: Արտադրական տարածքի հատուկ հատկացված վայրերում տեղադրված են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

Անվտանգության կառավարման համակարգերի տեղակայվածությունը

Վթարային վիճակը վերահսկվում է հատուկ տվիչների և ազդանշանային համակարգի միջոցով:

ՀՀ կառավարության 21.01.2010 թ.-ի «Բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 51-Ն որոշման հավելվածով ցանկապատում և անվտանգության համակարգերի տեղադրում նախատեսված չէ:

Թափոնների հնարավոր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա, ինչպես նաև դրանց կանխարգելման և մեղմման միջոցառումները-

Թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա լինելու է գրեթե զրոյական, քանի որ թափոններ չեն առաջանալու:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման կամ մեղմացման միջոցառումները նախատեսված են ՇՄԱԳ հաշվետվության համապատսխան բաժնում:

Թափոնների օբյեկտում և հարակից տարածքներում շրջակա միջավայրի մոնիթորինգի ծրագիրը

- Տեղամասում թափոնների օբյեկտի կառուցում չի նախատեսվում, օբյեկտում և հարակից տարածքներում մոնիթորինգ չի իրականացվելու:

Թափոնների կառավարման համար անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություններ

Ինչպես արդեն նշվել է, աշխատանքների ավարտից հետո, դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշումից ու նմուշարկման աշխատանքներից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 630 մ^3 ԱԿԽ զանգվածից նմուշարկումից հետո մնացած 629.5 մ^3 (մոտ 0.5մ^3-ը նմուշների ծավալն է) ծավալով ԱԿԽ կուտակի հետլցնում: Աշխատանքները կկատարվեն ձեռքով, առանց լրացուցիչ ծախսերի: